Երևանի պետական համալսարանում գործող
ՀՀ ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0025, Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1)

ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Աղվանի Դիլբանդյանի ԺԲ.00.04 «Դատական իրավունք՝ դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ Անի Սարմենի Միքայելյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Ընդդատության հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է ընդդատության հիմնախնդիրների ուսումնասիրությանը և վերլուծությանը: Դատական համակարգի կազմակերպական առանձնահատկությունները, մասնավորապես միևնույն օղակի դատարանների մեծաքանակությունը պայմանավորում են քաղաքացիական գործերը քննելու համար տվյալ դատական համակարգի դատարանների միջև բաշխելու կարգը սահմանող իրավական նորմերի գոյությունը, որոնց ամբողջությունը կազմում է ընդդատության ինստիտուտը: Թեև ընդդատության ինստիտուտն քաղաքացիական դատավարությունում ունի առանցքային նշանակություն, սակայն այն հայրենական քաղաքացիական դատավարության շրջանակներում սակավ ուսունասիրված ինստիտուտներից է: Հայրենական իրավական գրականության մեջ չկա համապարփակ որևէ հետազոտություն, որտեղ քննարկված և վերլուծված կլինեն ընդդատության ինստիտուտի հետ կապված առավել արդիական հարցերը, մասմավորապես ընդդատության հասկացությունը, ընդդատության կանոնների կիրառման շրջանակները, ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքները և այլն: Նշված հետազոտության իրականացման անհրաժեշտությունը առավել ցայտուն դարձավ 2018 թվականին կատարված դատահիրավական բարեփոխումներից հետո,

երբ ուժի մեջ մտավ նոր քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, որտեղ ընդդատության ինստիտուտը ենթարկվեց էական փոփոխությունների:

Ընդդատության ինստիտուտին վերաբերող ՀՀ վճռաբեկ դատարանի բազմաթիվ նախադեպային որոշումները նույնպես փաստում են այս ինստիտուտի բարդությունը, բազմասպեկտությունը և վիճելի լինելը: Դրա հետ մեկտեղ, բացակայում է նաև այդ նախադեպերը վերլուծող տեսական աշխատանք, ինչն իսկապես շատ անհրաժեշտ է և արդիական, այդ թվում՝ պրակտիկ, օրինաստեղծ տեսանկյուններից:

Կատարված աշխատանքի ուսումնասիրությունը թույլ է տալիս նշելու, որ հեղինակը կատարել է հետաքրքիր, խորը, համապարփակ հետազոտություն: Հեղինակը աշխատանքը կատարելիս հիմնվել է ոչ միայն հայրենական հեղինակների աշխատությունների վրա, այլև օգտագործել է արտասահմանյան գրականություն: Անդրադարձել է տեսության մեջ և պրակտիկայում առկա բազմաթիվ խնդրահարույց հարցերի, վեր հանել դրանց էությունը և առաջարկել դրանց լուծման կառուցակարգեր: Անի Միքայելյանը հարստացրել է իր աշխատությունը ինչպես հայաստանյան, այնպես էլ այլ պետությունների օրենսդրական ակտերով, ուսումնասիրել և աշխատանքում ներկայացրել բավականին հարուստ պրակտիկ նյութ, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք կարևոր որոշումներ, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի թեմային առնչվող որոշումներ: Հեղինակի կողմից ուսումնասիրվել է նաև առաջին ատյանի դատարանների դատական պրակտիկան, ինչը ընտրված թեման համակողմանի ուսումնասիրելու հիմք է ծառայել:

Աշխատանքում առկա են արժեքավոր հետևություններ և տեղեկություններ: Մասնավորապես, պարագրաֆ 1.1.-ում հեղինակը ուսումնասիրում է քաղաքացիական գործերով ընդդատության ինստիտուտի հասկացությունը և իրավական բնույթը: Այստեղ հեղինակը ներկայացնելով տեսական նյութ, վերլուծելով տարբեր հեղիանկների դիրքորոշումները՝ ներկայացնում է ընդդատության բնորոշման հարցում առկա մոտեցումները, վեր է հանում ընդդատության ինստիտուտի հիմնական հատկանիշները և ձևակերպում ընդդատութան ինստիտուտի հասկացությունը:

Պարագրաֆ 1.2.-ում հեղինակը ներկայացնում է ընդդատության տեսակների դասակարգման չափանիշները, դրա տեսակներից յուրաքանչյուրը, դրանց

տարբերությունները և նմանությունները՝ ձևակերպելով մի շարք եզրահանգումներ:

Պարագրաֆ 2.1.-ում հեղինակը ներկայացնում է տարածքային ընդդատության ընդհանուր կանոնի իրավական բնույթը: Հեղինակը բավականին հետաքրքիր վերլուծություն է կատարում՝ ներկայացնելով «պատասխանողի «բնակության վայր», «հաշվառման վայր» և «գտնվելու վայր» հասկացությունները, դրանց հարաբերակցությունը:

Պարագրաֆ 2.2.-ում հեղինակն մանրամասն անդրադառնում է այլընտրանքային ընդդատության կանոններից յուրաքանչյուրին, ներկայացնում այդ կանոնների իրավաչափ կիրառման պայմանները և արդյունքում ձևակերպում մի շարք առաջարկներ՝ ուղղված այդ կանոնների կատարելագործմանը, այդ թվում առաջարկելով այլընտրանքային ընդդատության կանոնների շարքում ներառել նոր կանոններ, իսկ որոշները վերաձևակերպել:

Պարագրաֆ 2.3.-ում վերլուծության է ենթարկվում «ընդդատության մասին համաձայնությունը»: Ուսումնասիրելով տարբեր երկրների օրենսդրական կարգավորումները, տեսական աղբյուրները՝ հեղինակը վեր է հանվել այն պայմանները, որոնց առկայության դեպքում ընդդատության մասին համաձայնությունը համարվում է վավեր և կարող է հանգեցնել է իրավաբանական հետևանքների:

Պարագրաֆ 2.4.-ում ուսումնասիրության առարկա է դարձվել բացառիկ ընդդատության ինստիտուտը: Հեղինակը ներկայացնելով տարբեր երկրների համանման օրենսդրական կարգավորումներ, դատական պրակտիկա և տեսական աղբյուրներ՝ կատարում է մի շարք հետաքրքիր եզրակացություններ, մասնավորապես ձևակերպում է բացառիկ ընդդատության կանոնի սահմանման չափանիշը, առաջարկում այլ կարգավորում տալ բացառիկ ընդդատության և տարածքային ընդդատության այլ կանոնների փոխհարաբարեկցության հարցին, վերլուծելով բացառիկ ընդդատության առանձին կանոնները՝ ներկայացնում է դրանց կատարելագործմանն ուղղված մի շարք առաջարկներ:

Պարագրաֆ 2.5.-ում հեղինակը առաջարկում է միմյանց հետ կապված գործերի ընդդատությունը առանձնացնել որպես տարածքային ընդդատության ինքնուրույն տեսակ՝ տալով դրա հասկացությունը և ներկայացնելով միմյնաց հետ կապված գործերի ընդդատության առանձին կանոնները:

Պարագրաֆ 3.1.-ում ուսումնասիրվում է ընդդատության կանոնների խախտման

հետևանքները քաղաքացիական գործի հարուցման փուլում, մասնավորապես վերլուծության է ենթարկվում ընդդատության կանոնների խախտման հիմքով հայցադիմումի վերադրաձման առկա կարգավորումը, հայցադիմումի վերահասցեագրման ինստիտուտը: Այդ վերլուծության արդյունքում հեղինակը կատարում է ուշադրության արժանի հետևություններ:

Պարագրաֆ 3.3.-ում հեղինակը ուսումնասիրության առարկա է դարձնում ընդդատության կանոնների խախտմամբ քաղաքացիական գործի քննության և լուծման իրավական հետևանքների հետ կապված հարցերը, որի շրաջանակներում անդրադառնում է գործը մի դատարանից մեկ այլ դատարան հանձնելու կանոններին, ընդդատության որոշման շուրջ առաջացող վեճերին և քննարկում այն հարցը, թե արդյոք ընդդատության կանոնների խախտումը կարող է հանգեցնել դատական ակտի բեկանման:

Աշխատանքի ուսումնասիրության արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ հեղինակը կատարել է ավարտուն աշխատանք, կիրառելով ճիշտ մեթոդաբանություն, օգտագործելով տեսական, պրակտիկ լայնածավալ նյութեր: Պետք է նշել նաև, որ աշխատանքում կատարված հեղինակի դիտարկումներն ու նկատառումները պատշաճ հիմնավորված և արժեքավոր են: Կարելի է հաստատապես փաստել, որ հեղինակին հաջողվել է գիտական պատշաճ մակարդակի բավարարող աշխատանք ներկայացնել:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի կողմից հրապարակած յոթ գիտական հոդվածներում: Սեղմագիրը արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները և համապատասխանում է ներկայացված աշխատանքին:

Այնուամենայնիվ, կարծում եմ ատենախոսության մեջ առկա են առանձին եզրակացություններ, որոնք վիճելի են: Ցանկանում եմ հեղինակի ուշադրությունը հրավիրել դրանց վրա.

1. Հեղինակը հետևողականորեն բացահայտել է բացառիկ ընդդատության կանոնները և դրանց կիրառման ընթացքում ի հայտ եկող խնդիրները՝ տալով օրենսդրության կիրառման մեկնաբանություններ: Սակայն այստեղ հեղինակը ցանկանում է ընդլայնել բացառիկ ընդդատության կանոնների կիրառման շրջանակները:

Մասնավորապես, ներկայացնելով ՀՀ ՔԴՕ 24-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված բացառիկ ընդդատության կանոնը (հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասերը, շենքերը, շինություններն ուրիշի

ապօրինի տիրապետումից հետ պահանջելու, սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքների խախտումները վերացնելու վերաբերյալ հայցերը հարուցվում են հողամասերի, շենքի, շինության գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան), հեղինակը նշում է, որ եթե բացառիկ ընդդատության վերաբերյալ այս կանոնի նախատեսման նպատակը վեճի օբյեկտ հանդիսացող անշարժ գույքի գտնվելու վայրում գործի առավել արագ և ճիշտ, կողմերի ու դատարանի համար ժամանակի և միջոցների խնայումով լուծելն է, քանի որ այդ գործերի քննությունը, որպես կանոն, կապված է լինում տեղում մանրակրկիտ ստուգողական գործողությունների իրականացման, շինությունների զննման, հարևաններին հարցաքննելու և այլ դատավարական գործողությունների կատարման հետ, ապա վկայակոչված գործողությունների կատարման անհրաժեշտությունը առաջանում է ոչ միայն ՀՀ ՔԴՕ 24-րդ հոդվածի 1-ին մասում ներառված պահանջներով գործերի քննության, այլ նաև անշարժ գույքի նկատմամբ ներկայացվող այլ պահանջներով գործերի քննության ընթացքում: Այդպիսի գործերի թվին հեղինակը դասում է նաև անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը դադարեցնելու, անշարժ գույքի նկատմամբ սահմանվող սերվիտուտների վերաբերյալ ներկայացվող պահանջները և այլն: Արդյունքում հեղինակը առաջարկում է ՀՀ ՔԴՕ 24-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել հետևյալ կերպ. «Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների վերաբերյալ հայցերը ներկայացվում են անշարժ գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան»:

Կարծում ենք, որ նման կանոնի սահմանման դեպքում ընդդատության այս կանոնի գործողության դաշտ կարող են մտնել նաև այնպիսի գործեր, որոնցով ներկայացված պահանջը թեև կարող է կապված լինել անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների հետ, սակայն դրանցով անշարժ գույքի գտնվելու վայրում որևէ գործողություններ կատարելու անհրաժեշտություն չլինի, և նման դեպքերում այդ գործերը կարող են քննվել նաև ընդհանուր տարածքային ընդդատության կանոններով: Իսկ հեղինակի առաջարկած կանոնը իր հերթին կարող է հանգեցնել չարաշահումների՝ կապված տարածքային ընդդատության ընդհանուր կանոնից անհիմն խուսափելու հետ:

Համաձայն լինելով հեղինակի մտահոգության հետ, որ հակառակ դեպքում մի շարք գործեր դուրս են մնում բացառիկ ընդդատության կանոնների կարգավորման շրջանակներից՝

այնուամենայնիվ կարծում եմ, որ խնդիրն այստեղ նաև իրավակիրառման մեջ է, այսինքն՝ դատարանները կարող են ՀՀ ՔԴՕ 24-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված կանոնը մեկնաբանել ավելի լայն, որի արդյունքում օրենսդրական փոփոխության անհրաժեշտություն չի առաջանա:

2. Հեղինակը անդրադառնալով պայմանագրային ընդդատության մասին համաձայնությանը՝ վերլուծության է ենթարկում այն հարցը, թե արդյոք պայմանագրային ընդդատության մասին համաձայնության մեջ կարիք կա հստակ նշելու իրավասու դատարանը, որը առկա համաձայնության հիման վրա քննելու է կողմերի միջև առաջացած վեճը, թե իրավասու դատարանը կարող է որոշվել նաև այլ եղանակներով: Հեղինակը աշխատանքում հանգել է այն եզրահանգման, որ թեև օրենսդիրը կողմերին իրավունք է վերապահել փոխադարձ համաձայնությամբ փոփոխել ընդհանուր տարածքային և այլընտրանքային ընդդատության կանոնները, սակայն կողմերի համաձայնությունը ընդդատության փոփոխության վերաբերյալ պետք է լինի հստակ և որոշակի, այլ ոչ թե ձևակերպված լինի այնպես, որ գործն ընդդատյա լինի ցանկացած դատարանի: Հետևաբար, կողմերը որպես իրավասու դատարան ընդհանուր իրավասության դատարանները կարող են սահմանել միայն այն դեպքում, եթե նրանց որոշման հստակության աստիճանը բավարար է այնքանով, որ միանշանակ սահմանվի իրավասու դատարանը:

Կարծում եմ նշված եզրահանգումը կարող է խնդրահարույց լինել կապված պայմանագրի ազատության սկզբունքի սահմանափակման հետ: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանը 14.06.2011թ. թիվ ՍԴՈ-975 որոշման շրջանակներում անդրադառնալով պայմանգրի ազատության սկզբունքին՝ նշել է, որ պայմանագրի ազատության բովանդակությունը՝ պայմանագրի պայմանների բովանդակության ազատ ընտրության առումով հանգում է նրան, որ պայմանագրի կողմերն իրենց հայեցողությամբ սահմանում են պայմանագրի պայմանները՝ ստանձնելով փոխադարձ պարտավորություններ և ձեռք բերելով համապատասխան իրավունքներ: Պայմանագրի կողմերին ուղղված միակ պահանջն այն է, որ նրանց միջև փոխհամաձայնեցված պայմանի բովանդակությունը չհակասի օրենքի իմպերատիվ նորմով սահմանված պայմանի բովանդակությանը: Մասնավորապես, կողմերը չեն կարող օժտվել հայեցողությամբ պայմանագրի այն պայմանի բովանդակությունը որոշելու հարցում, որի բովանդակությունն ամրագրված է օրենքի

իմպերատիվ նորմով, կամ սահմանել օրենքի իմպերատիվ նորմով սահմանված պայմանին հակասող պայման:

Այս տեսանկյունից կարծում եմ, որ հեղինակի նշված առաջարկը մի փոքր վիճելի է, քանի որ օրենքի իմպերատիվ նորմով որևէ արգելք նախատեսված չէ պայմանագրային ընդդատության մասին համաձայնության մեջ իրավասու դատարանը հստակ սահմանելու հարցում: Այս համատեքստում կարծում եմ, որ աշխատանքը կշահեր, եթե հեղինակը նշված առաջարկը ներկայացնելիս հիմնավորեր նաև, որ դրանով չի սահմանափակվում պայմանագրի ազատության սկզբունքը և նշված վերլուծությունը կատարվեր նաև այս հարթության մեջ:

3. Անդրադառնալով այն հարցին, թե ընդդատության կանոնների խախտմամբ կայացված ըստ էության ճիշտ դատական ակտը ենթակա է բեկանման, թե ոչ, հեղինակը եզրահանգել է, որ ընդդատության կանոնների խախտումը չի կարող դատական ակտի բեկանման ինքնուրույն հիմք հանդիսանալ, քանի որ վեճը կողմերի միջև լուծվել է նույն օղակի, նույն իրավասությամբ օժտված դատարանի կողմից: Դատական ակտի բեկանումը միմիայն ընդդատության կանոնների խախտման հիմքով փաստացի հանգեցնում է դատական պրոցեսի կրկնությանը:

Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի անքակտելի տարրն է դատարան դիմելու իրավունքը, որը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանությամբ՝ ենթադրում է այն դատարանին հայց ներկայացնելու իրավունքը, որն իրավասու է ուսումնասիրելու գործի բոլոր հանգամանքները, կիրառելու վեճին առնչվող օրենքը և ընդունելու պարտադիր որոշումներ: Հետևաբար, ընդդատության կանոնի խախտումը առկա է այն դեպքում, երբ գործը քննում է այն դատարանը, որը տվյալ գործը քննելու իրավասություն չունի, ինչն էլ իր հերթին հանգեցնում է անձի օրենքով սահմանված դատարանում իր գործի քննության իրավունքից:

Ասվածի հիման վրա, կարծում եմ, որ հեղինակի կողմից արված այն եզրահանգումը, որ զուտ ընդդատության կանոնների խախտումը չի կարող հանգեցնել կայացված ըստ էության ճիշտ դատական ակտի բեկանման այդքան էլ միանշանակ չէ, և այս կոնտեքստում այն ենթակա է լրացուցիչ հիմնավորման:

Վերոնշված դիտողություններն, այնուամենայնիվ, կրում են բանավիճային բնույթ և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Անի Սարմենի Միքայելյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Ընդդատության հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997թ.-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» կետ 7-ի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.04 «Դատական իրավունք՝ դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝ **Ս.Ա.Դիլբանդյան**

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

21.06.2021թ.

ԵՊՀ քրեական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Աղվանի Դիլբանդյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

դեկանի տեղակալ, իրավ. գիտ. դոկտոր,

պրոֆեսոր՝ **Հ.Մ. Խաչիկյան**